



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԽԱՌՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ԱՂԹԱՄԱՐԱՅ ԱԹՈՌՈՅ

ԿԱԹՈՒՂՈՍՏԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ

1872 ՆՈՅԵՄԲԵՐ 15

ՆԵՐԿԱՅԱՑԵԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Printed in Turkey



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻԿԷՆՏԻՍԵԱՆ

1747

9(47.925)
Ա-23

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԽԱՌՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ԱՂԹԱՄԱՐԱՅ ԱԹՈՌՈՅ՝

ԿԱԹՈՒՂՒԿՈՍԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ

1872 ՆՈՅԵՄԲԵՐ 15

ՆԵՐԿԱՅԱՅԵԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻԷՆՏԻՍԵԱՆ

(1873)

207
448

ՀԻՔՄԲԵՐԵՑ

ՅՈՒՐՈՒՆԵՄԱՅԵԱՆ ՎՈՍԿ

ՅՈՒՐՈՒՆ ԵՄԱՍՄԵՐԱՐԱՆ

ՎՅՈՒՐՈՒՆ ԵՄՄԱՍՄԵՐԱՐԱՆ

ՅՈՒՐՈՒՆ ԵՄՄԱՍՄԵՐԱՐԱՆ

ՅՈՒՐՈՒՆ ԵՄՄԱՍՄԵՐԱՐԱՆ ԵՄՄԱՍՄԵՐԱՐԱՆ



ՅՈՒՐՈՒՆ ԵՄՄԱՍՄԵՐԱՐԱՆ

ՅՈՒՐՈՒՆ ԵՄՄԱՍՄԵՐԱՐԱՆ ԵՄՄԱՍՄԵՐԱՐԱՆ

(1873)

Ազգային Ընդհանուր ժողովոյ .

Ազգային Վարչութեան նախորդ Քաղաքական ժողովը խօստացած ըլլալով Ազգային Ընդհանուր ժողովոյ ներկայացնել Աղթամարայ Կաթուղիկոսական խնդիրը Տեղեկագրով մը հանդերձ , արդի Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Խառն ժողովս իւր մէջէն ընտրեալ Խառն Յանձնաժողով մը կարգեց որ Աղթամարայ Կաթուղիկոսութեան խնդրոյն վրայ Տեղեկագիր մը սլատրաստեց , զոր ամբողջ Ազգային Ընդհանուր ժողովոյդ կը ներկայացնեմք :

Թէեւ Պատկառելի ժողովդ 1870 Յունվար 23ի նիստին մէջ Աղթամարայ խնդիրը Նկեղեցական Համագումար ժողովոյ տնօրինութեանը յանձնել որոշած էր , բայց այդ որոշումը մինչեւ ցարդ անգործադրելի մնացած ըլլալով՝ Ազգային Վարչութեան Խառն ժողովս հարկ համարեց այս մասին Պատկառելի Ընդհանուր ժողովոյդ կամքն ու վերջնական որոշումը ստանալ :

ՆԱԽԱԳԱՀ

Ազգ. Վարչութեան Խառն ժողովոյ
Պ. Կ. ԽՐԻՄԵԱՆ

7 Դեկտեմբեր 1872
/ի Պատրիարքարանս Հայոց

Ի ԴԻՄԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱԴՊԻՐ
Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ
ԹԱԴԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի ԴԻՄԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱԴՊԻՐ
ՍՏԵՓԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ
ՍԵՆԵՔԵՐԻՄ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ


ՏԵՂԵԱՍՊԻՐ

ԽԱՌՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ԱՂԹԱՄԱՐԱՅ ԱԹՈՌՈՅ

ԿԱԹՈՒՂՈՍԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ

1872 ՆՈՅԵՄԲԵՐ 15



ԱՄԵՆԱՊԱՏԻ ԾՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

Նախագահ Աղգային Կեղրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ

Աղգային Կեղրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ իւր Գ. նիստի մէջ Երեւոյնի սահմանական Ընդհանուր Ժողովոյ որոշման և Աղթամարայ թեմականաց առ Խառն Ժողովոյ մատուցած խնդրագրոյն համեմատ Աղթամարայ Կաթողիկոսական խնդիրը նկատողութեան առնելով՝ սոյն խնդրոյն պատկանեալ բոլոր գրերն աչքէ անցնելու և առ Պատկառելի Ժողովոյ տեղեկագրելու համար ընտրեց Յանձնաժողովս :

Յանձնաժողովս իր պաշտօնի կոչուած օրէն՝ այն է 1872 Օգոստոս 23 էն սկսեալ ընդ ամենը տասը նիստերու մէջ Աղթամարայ Կաթողիկոսական խնդրոյն վերաբերեալ գրերն, թէ Ժողովրդային հանրագրութիւնք, թէ մասնաւորաց նամակք, թէ պաշտօնական գրութիւնք և թէ քննիչ կարգուած երկու Արքեպիսկոպոսաց տեղեկագիրն, սոյնպէս Վանայ Կառավարչի, Կրօնական և Խառն Յանձնաժողովոյ տեղեկագիրներն, թէ սոյն խնդրոյն նկատմամբ Աղգային Ժողովոյ Դիւանական Ատենագրութեանց տուժարներն, որոշմունք և վճիռք և թէ Բ. Դրան հետե-

ղած թղթակցութիւնք, ասոնք ամենքն ալ մի առ մի այլ և այլ նիստերու մէջ առանձինն քննելէ ետքը՝ նոցա իմաստից համաօտութիւնն ամփոփեց իր նիստերու ատենագրութեանց մէջ, յորոց՝ Աղթամարայ Աթոռոյ Կաթողիկոսական խնդրոյն 1864 թուականէն մինչ 1870 թուականն՝ ամբողջ ութ տարուոյ շրջանի մէջ տեղի ունեցած եղելութեանց պատմութիւնն ի վեր հանելով, Աղգային Կեղրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ Պատկառելի Ատենին կը ներկայացնէ սոյն տեղեկագրովս :

Սոյն ութ տարուան կնճռալից խնդիրն ըստ կարի պարզ և անչիտթ եղանակի վերածելու նպատակաւ՝ Յանձնաժողովս իր այս պատրաստած պատմական տեղեկագիրը Ժ. Գ. հատուածներու բաժանեց իւրաքանչիւրին ներքև աւելցնելով այն հատատական գրութեանց անուանումը թրւականով և ամսաթուով հանդերձ, որոնցմէ ինք Յանձնաժողովս կարաց տեղեկանալ խնդրոյն եղելութեան և իր այս ընթացքին մէջ երկուստէք եղած թէ պաշտպանողական և թէ ամբաստանողա-

կան գրերն ջանաց միշտ հաւասարակը-
ւութեան մէջ պահել :

Պատմական տեղեկութիւններէն ետքը
կը յաւելու նաև 'ի վերջոյ նոցա բովան-
դակութիւնը :

Ա.

Կեանք Պետրոս Կաթուղիկոսի Հանդուցելոյ .

Յանձնաժողովս՝ Աղթամարայ Աթո-
ւոյն Միաբանութեան և թեմական ժողո-
վրդեան բազմաստորագիր հանրագրու-
թիւններէն և Քննիչ կարգուած վանայ
Առաջնորդ Գեր. Իգնատիոս և Կարնոյ Ա-
ռաջնորդ Յարութիւն Արքեպիսկոպոսաց
պաշտօնական տեղեկագրէն խելամուտ ե-
ղաւ թէ, Աղթամարայ հանդուցեալ Պե-
րոս Կաթուղիկոս իր կոչման տնօրէն ե-
ղած ապօրինի ընթացիւքն Միաբանու-
թեան և ժողովրդեան առաջ իր փարկն
կորսնցուցած է և թէ Միաբանութիւնն
և ժողովուրդ անհնարինս գայթակղած են
և զգուած իսկ նորա գահակալութենէն,
հաստատեն զայս, հեռուեալ դրութիւնք :

Նարեկայ փանուց փանահայր Յով-
սէփ վարդապետ իր մէկ նամակուն (1864
Յուլիս 16 ին գրուած) կը դանդաղի Պե-
րոս Կաթուղիկոսէն և անկէ կրած հարա-
ժանքներն մէջ բերելով ազատութիւն կը-
խնդրէ : Ազգային վարչութիւնը անապով
Յովսէփ վարդապետի բողոքանաց, Նարե-
կայ փանքը Աղթամարայ աթոռոյն իրաւա-
սութենէն հանելով վանայ առաջնորդի
իշխանութեան սակ կ'ենթարկէ :

Վանայ առաջնորդ Գեր. Իգնատիոս Սըր-
բազան 1864 Սեպտեմբեր 26 թուով գը-
րած նամակին մէջ այսպէս կը խօսի Պե-
րոս Կաթուղիկոսի նկատմամբ .

“Աղթամարայ Պետրոս Կաթուղիկոսը ակն
յայտնի ցոյց տուաւ իւր շարութիւնը և
խայտառակեցաւ, ընդ որ Միաբանք և թե-
մականք խոժոռեալ դնան և ինքնադուխ-

իջուցանեն զնա յաթոռոյն և դիտաւոր
լուելեայն Կաթուղիկոս օժեն ” :

Այս երկու գրերն ալ Պետրոս Կաթու-
ղիկոսի կենդանութեանը դրուած են :

Յետ մահուան եկած դանդաղանաց
գրերն .

1864 Հոկտեմբեր 1, Աղթամարայ Միա-
բանութեան և թեմական ժողովրդեան
բազմաստորագիր հանրագրութիւնը :

1864 Հոկտեմբեր 2, Աղթամարայ Միա-
բան միջանի Եպիսկոպոսաց և վարդապե-
տաց մէկ նամակն :

1864 Դեկտեմբեր 12, Աղթամարայ Միա-
բան չորս Եպիսկոպոսաց և վեց վարդա-
պետաց “Խորհրդական խոստովանութիւն”
վերնագրով դրութիւնը՝ յորում խիստ
նողկալի կերպով կը նկարագրեն Պետրոս
Կաթուղիկոսի կեանքը :

1864 Դեկտեմբեր 29, Աղթամարայ Միա-
բանութեան և թեմական ժողովրդեան
բազմաստորագիր հանրագրութիւնը :

1866 Յունիս 30, վանայ երևելի Խչիա-
նաց վկայական նամակն՝ որով կը քսեն թե-
“եթ տարիէ 'ի վեր Աղթամարայ Միա-
բանք և թեմականք թէ պէտ ունէին Կա-
թուղիկոս ” բաց որպէս թէ՛ չունէին .
իբրև ոչխար որոց ոչ իցէ հովիւ . . . ” :

Այսպէս (1865 Մարտ 11 թուով) Աղթա-
մարայ թեմական ժողովրդեան, (1865
Մարտ 14) Աշտուներաց, (1865 Մարտ 21)
Շատախու, (1865 Մարտ 16) Խիզանու,
(1865 Մարտ 9) Մակայ, (Հայոց թուական
1314 Մարտ 15) Հայոց Զորոյ և (1314 Մարտ
14) Քիւրախաւանու Գաւսաց ժողովր-
դեան բազմաստորագիր հանրագրութիւնք
կը գանդատին Պետրոս Կաթուղիկոսի
եթնամեաց գահակալութենէն և նորա
վարած կեանքէն :


Իսկ 'ի նպաստ Պետրոս Կաթուղիկոսի ե-
կած երկու երկք գրոց մէջ, եթէ նորա
նկատմամբ որ և է ամբաստանութիւն մ'ալ
չկայ նէ՛ ջատագովութիւն բնաւ ոչ, ինչ-
պէս 1864 Նոյեմբեր 13, Աղթամարայ
բողոքը՝ որոյ ներքեւ երկու հարկերէն ա-
ւելի ստորագրութիւն կը կրէ, այս մը-

սին բան մը խօսած չէ :

Իսկ Ռուսան Գաւառի Ժողովրդեան 1865 Յունվար 30 ամսաթուով գրած Հանրա- գրութիւնը գրեթէ կը գանգատի իսկ ըսելով թէ « Իրաւ է որ մեր Աթու եօթը հարիւր յիսուն տարիէ ՚ի վեր կաթուղի- կոս կը նստի, որոնք ամենայն անձնուի- րութեամբ մեզ տիրապետած են Քիւր- տերուն բռնութենէն և իրենց արդար վարուքը Աղգին պարծանք եղած են, բայց այժմեան կաթուղիկոսներ, թնղ զմեզ Քիւրտերէն ազատելը՝ իրենք ալ անոնց հետ միացած զմեզ կը գիշատեն » :

Կայ նաև Նարեկայ Վանուց Վանահայր Յովսէփ վարդապետի մի երկար նամակն, որով ամբողջ դարձուածոց պատմութիւնը կ'ընէ և ուր զՊետրոս կաթուղիկոս բարի և առաքինի կը վարկանէ և զԽաչատուր Սրբազան ամենայնի յանցապարտ կը դա- տէ. բայց սա իւր այս 1864 Նոյեմբեր 28 ի գրածն 1867 Յուլիս 6 ին ետ կառնէ ուրիշ նամակաւ մը « Վայ այնոցիկ է ըստ գրոյն որ զարիւն անբիծ պարտաւոր առ- նեն » ըսելով :

Գարձեալ այս Յովսէփ Վարդապետ 1867 Մայիս 13 ին Աղթամարայ Միաբանութեան առ Ս. Էջմիածնի վեհ. կաթուղիկոս գըր- ուած գրութիւնն ալ կ'ստորագրէ և կը կըն- քէ՝ որոյ մէջ կը պարունակէ Խաչատուր Սրբազանի նկատմամբ գովեստներ :



Բ.

Աղթամարայ կաթուղիկոսական փոխանորդ կարգուիլը .

1864 թուոյն բերանացի և գրա- լոր գանգատներ կ'ըլլան Աղթամարայ Պետ- րոս կաթուղիկոսի մասին առ Աղգային կը- բօնական Ժողովն, և սորա հաստատու- թիւնը կը գտնենք Քաղաքական Ժողովոյ 1864 Օգոստոս 7 Գ. նիստի ատենագրու- թեան 280 երեսը, ուր կը կարդանք հե- տեւեալը :

« Աղթամարայ կաթուղիկոս . — « Այս կաթուղիկոսին անկարգ ընթացքը և իր ատտիճանին անվայել գործերը կրօնական ժողովին գիտութեան հասնելով, յայտ- նեց թէ՛ շատ փափաքելի կ'ըլլար սոյն Ա- թուը որ Աղգային հին երկպառակու- թեանց դառն պտուղն է՝ բառնալ . բայց որովհետև այս փափուկ խնդիրը կրնայ մեծ տարածայնութիւն հանել, կրօնական Ժո- ղովը մտածեր է որ Աղթամարայ կաթու- ղիկոսին ալ փոխանորդ մը կարգուի, և կաթուղիկոսը Աղթամարայ վանքէն բը- նաւ դուրս չելնէ :

Քաղաքական Ժողովը կ'առաջարկէ որ՝ այս ծանր խնդրոյն վրայ կրօնական Ժողո- վը վերստին խորհի և իւր տեղեկագիրը մաւտուցանէ :


Եւ այս խնդրոյն որոշումն ալ կը կար- դամք Քաղաքական Ժողովոյ Գ. նիստի մէջ 1864 Օգոստոս 14, երես 284 :

« կրօնական Ժողովը տեղեկագրով յայտ- նելով որ՝ արժան կը դատի Վանայ Առաջ- նորդն Աղթամարայ կաթուղիկոսին փոխա- նորդ կարգել, Ժողովը սոյն որոշման հա- լանութիւն ցցուց » :

Գարձեալ Քաղաքական Ժողովոյ Ը. նիս- տի մէջ կը կարդամք 10 Սեպտեմբեր 1864 երես 310 .

« Աղթամարայ կաթուղիկոս . — Սոյն կա- թուղիկոսին նկատմամբ ասկէ առաջ ե- զած որոշման գործադրութեան համար արժան դատուեցաւ Վանայ Առաջնորդին գրել որ ինքը առ այժմ անոր փոխանորդ կարգուած է և կաթուղիկոսին ալ իմաց տալ որ այս տնօրէնութեամբը վարչու- թեան նպատակն է իր իրաւասութիւնը յարգել տալ և իր վրայ ծանրացած գոր- ծոց օժանդակ գտնուիլ » :

Եւ այսպէս խառն Ժողովոյ որոշմամբ իգնատիոս Սրբազան փոխանորդ կը կար- գի Աղթամարայ կաթուղիկոսին :



Գ.

Հրաժարական Պետրոս Կաթուղիկոսի .

Յանձնաժողովս Գննիչ Արքեպիսկոպոսաց պաշտօնական տեղեկագրէն խնայալ թէ՛ Աղթամարայ Միաբանութիւնն և թեմական ժողովուրդն տեսնելով Պետրոս Կաթուղիկոսի իւր Հայրապետական բարձր կոչման և պաշտօնին հակառակ անլայել ընթացից մէջ գտնուիլն , զայն ՚ի կարգ և յուղղութիւն անտես համար Աղթամարայ վանուց մէջ մէկ երկու անգամ Վանայ Առաջնորդ Գեր . Իզնատիոս Արքեպիսկոպոսի և Վանայ Բաղարական Ժողովոյ անդամոց սմանց ներկայութեան Վանական Ժողով կազմելով Կաթուղիկոսարանին բարեկարգութեան և Կաթուղիկոսին պաշտօնին վերաբերեալ մէկ քանի կանոններ կը սահմանեն , զորս Պետրոս Կաթուղիկոս Միաբանութեան և թեմական ժողովրդեան հետ ընդունել և ստորագրելէ վերջը՝ դարձեալ իւր առաջին ընթացքն ըսկըսելէ շարունակել , և թէ՛ Պետրոս Կաթուղիկոս իր վրայ եղած ամբաստանութիւններէն ինքզինք ազատելու և Միաբանաց ու թեմականաց խորհրդով իր պաշտօնին ու պարտաւորութեանց համար սահմանուած կանոններէն ըստ ամենայնի ազատ լինելու նպատակաւ՝ իր կենդանութեանը Հայրապետական պաշտօնէն գրաւոր հրաժարական տալով վանքէն դուրս ելած և ՚ի Փշաւանք գիւղն իւր եղբոր տունն գնացած է , սոյ պատճէնն իսկ ընթերցաւ յատենի Յանձնաժողովոյս , հաստատեալ երկու քննիչ Արքեպիսկոպոսաց ստորագրութեամբն և կնքով : Բաց յայսմանէ կան մի քանի ժողովրդային հանրագրութիւններ ալ՝ սիւր կը յիշեն Պետրոս Կաթուղիկոսի հրաժարական տալը , և են հետևեալները .

1864 Հոկտեմբեր 2 , Աղթամարայ Միաբան երկու Եպիսկոպոսաց և երեք Վարդապետաց մէկ նամակն :

1864 Դեկտեմբեր 12 . « Խորհրդական

խոստովանու թիւնս վերնագրով Աղթամարայ Միաբան չորս Եպիսկոպոսաց և վեց Վարդապետաց գրութիւնը :

1865 Յուլիս 19 , Աղթամարայ Միաբանութեան և թեմական ժողովրդեան մէկ հանրագրութիւնը :

Դեռ ևս մի քանի մասնաւոր նամակներ ալ ստի կը յիշատակեն :

Իսկ Խառն ժողովոյ ատենագրութեան մէջ այս մասին հետևեալ տողերը կը կարգաւք .

« Ըստ որում հանգուցեալ Պետրոս Կաթուղիկոսի հրաժարականը հաւանական է որ՝ բռնութեամբ առնուած է » :

Տես 1865 Յուլիս 3 նիստ Գ . երես 35 :

Ի նպատակ Պետրոս Կաթուղիկոսի եղած երկու գրութեանց մէջ բնաւ հրաժարականի խօսք չկայ :

Գ.

Վնտրութիւն Խաչատուր Սրբազանի ՚ի Կաթուղիկոսութիւն Տանն Աղթամարայ .

Յանձնաժողովս Աղթամարայ Աթոռոյն միաբանութեան և թեմական ժողովրդեան բազմաստորագիր հանրագրութիւններէն և Վանայ Առաջնորդ Գեր . Իզնատիոս Արքեպիսկոպոսի մասնաւոր մէկ նամակէն տեղեկացաւ թէ՛ Խաչատուր Սրբազանի ընտրութիւնը կատարուած է 1864 Սեպտեմբեր 10ին Նարեկայ Վանայ մէջ Աղթամարայ Աթոռոյն Միաբաններէն և թեմականներէն գումարուած ժողովոյ մը մէջ՝ ուր Պետրոս Կաթուղիկոսի կեանքն ու ընթացքը ՚ի քննին առնելէ վերջը միաձայն հաճութեամբ Կաթուղիկոս կը նտրեն զԽաչատուր Սրբազան և Սեպտեմբեր 13ին ՚ի հաստատութիւն իրենց սոյն ըրած ընտրութեան կնքեալ պայմանագիր մը կուտան Խաչատուր Սրբազանի :

Կը վկայեն այսմ հետևեալ գրութիւնք ,

1864 Սեպտեմբեր 26 Թուով իզնա-
տիսս Արք Եպիսկոպոսի մէկ նամակն որ
յառաջ քան զմահ Պետրոսի կաթուղի-
կոսի :

1864 Դեկտեմբեր 12. « Խորհրդա-
կան խոստովանութիւն » վերնագրով մէկ
գրութիւնը :

1865 Յունիս 19. Աղթամարայ միաբա-
նութեան և թեմական ժողովրդեան հան-
րագրութիւնը :

1866 Յունիս 30. Վանայ իշխանաց
գրութիւնք, այսպէս նաև Ռչտունեայց —
Շատախու — Խիզանու — Մոկաց — Հայոց
Զորոյ — Քիւրտիստանու գաւառաց ժո-
ղովրդեան գրերն և այլ մասնաւորաց նա-
մակք :

Սոյն ժողովրդային ընտրութեան
դէմ որ և է հակառակ գրութիւն չկայ :
Միայն թէ այս ընտրութեան կը ձեռնար-
կեն առանց Աղգային Վարչութեան գի-
տութեան, և ինքնագլուխ գործել կ'ա-
ճապարեն :

Ե.

Օծութիւն Խաչատուր Սրբազանի 'ի' Կաթու-
ղիկոսութիւն .

Նարեկայ Վանուց մէջ սոյն ընտրու-
թիւնը լրանալէ ետքը՝ 1864 Սեպտեմբեր
25 ին Միաբանութիւնը և թեմականք Աղ-
թամարայ կղզին կ'անցնին զԽաչատուր
Սրբազան Կաթուղիկոս օծելու հանդէսն
կատարել . Պետրոս Կաթուղիկոս ասի կը
լսէ և կ'աճապարէ նաև նստիլ և ներս 'ի'
կղզին երթալ, բայց Աղթամարայ Միաբա-
նութիւնը զանի կ'արգելու ներս երթալէ,
(և ասի նոյն իսկ Միաբանից խոստո-
վանութիւնն է 1864 Հոկտեմբեր 2 ին
գրուած) որք կըսեն թէ՛ « Մենք արգի-
լեցինք զՊետրոս Կաթուղիկոս ներս 'ի'
կղզին երթալէ » :

Այսպէս զՊետրոս Կաթուղիկոս դուրսն
'ի' նաւահանգստին թողելով՝ Աղթամարայ

Աթոռոյն մէջ չորս Եպիսկոպոսօք և 10—12
Վարդապետօք և թեմական իշխանաց ներ-
կայութեան հանդիսաւոր եղանակաւ ըզ-
Խաչատուր Սրբազան Կաթուղիկոս կ'օծեն :

Վանայ Առաջնորդ և միանգամայն Աղ-
թամարայ Կաթուղիկոսական—փոխանորդ
Գեր. Իզնատիոս Սրբազան դեռ ևս օծումն
չեղած կը լսէ այս ամենը (1864 Սեպ. 26 ի
գրուած նամակաւն կը յայտնէ .) կը դիմէ
Վանայ կառավարչին ասոր առաջքն առնե-
լու, նոյնհետայն Հարիւրապետի մը և մէկ
քանի Զապիիէնէր— հրաման կըլլայ ներս 'ի'
կղզին երթալ և նոր Կաթուղիկոսի օծումն
արգիլել, բայց մինչ նոքա անդ կը հաս-
նին, ամեն քան լրացած կըլլայ :

Աղթամարայ Միաբանութիւնը և թե-
մական ժողովուրդք Կաթուղիկոսական
այս օծման պատճառ իրենք զիրենք կը
ներկայացնեն ըսելով թէ՛ հարկիւ, սոփ-
պանօք և աղաչանօք զԽաչատուր Սրբազան
Կաթուղիկոս ձեռնադրել տուինք : Առանց
Աղգային Վարչութեան հրամանին ընելու
մասին գալով՝ կ'առարկեն թէ՛ ասի մեր
հինաւանդ անխորտակելի մի սովորու-
թիւնն էր՝ վասն զի 750 տարիէ 'ի' վեր ա-
ռանց Պօլսոյ Վարչութեան հրամանին կա-
տարած ենք Կաթուղիկոսական օծու-
թիւնք :

Գրութեանց մէջ տեղ տեղ ալ յան-
դրգնութիւն կը համարին այս ըրածնին,
որ առանց Աղգային Վարչութեան գի-
տութեան օծումն ըրած են և այս մասին
ներողութիւն կը հայցեն :

Այսպէս այլ և այլ գրուածոց մէջ կ'ը-
սեն թէ՛ մեր սրտի ցաւէն և մեր վերջին
ծայր յուսահատութենէն, և թէ այլ ևս
կալոյ մնալոյ ժամանակ մնացած չըլլալուն
այս յանդուգն վարմանց մէջ գտնուե-
ցանք :

Ոմանք ալ Պետրոս Կաթուղիկոսի ա-
րարքները թուելով նորա խոստումը մէջ
կը բերեն, որ ինքն՝ Պետրոս Կաթուղի-
կոս ըսած է, « Արժանաւոր մէկն ընտրե-
ցէք և ձեռնադրեցէք, ես ալ արժանի
չեմ այս աթոռին » ևն :

Վերոգրեալներն կը հաստատեն հետա-
գայ գրութիւնք :

1864 Սեպտեմբեր 26 , Իգնատիոս Եպիս-
կոպոսի մէկ նամակը :

1864 Սեպտեմբեր 28 , Իգնատիոս Եպիս-
կոպոսի մէկ նամակը :

1864 Հոկտեմբեր 1 , Աղթամարայ միա-
բանութեան և թեմական ժողովրդոց հան-
րագրութիւնք :

1864 Հոկտեմբեր 2 , Իգնատիոս Եպիս-
կոպոսի մի ընդարձակ պաշտօնական նա-
մակը :

1864 Հոկտեմբեր 2 , Աղթամարայ Միա-
բանութեան և թեմական ժողովրդոց հան-
րագրութիւնք :

1864 Դեկտեմբեր 1 , Իգնատիոս Եպիս-
կոպոսի մէկ նամակը :

1864 Դեկտեմբեր 12 , « Խորհրդական
խոստովանութիւն » վերնագրով գրու-
թիւնք :

1864 Դեկտեմբեր 29 , Աղթամարայ միա-
բանութեան և թեմական ժողովրդոց
հանրագրութիւնք :

1865 Յունվար 28 , Աղթամարայ միա-
բանութեան և թեմական ժողովրդոց
հանրագրութիւնք :

1866 Յունվար 30 , Վանայ իշխանաց վը-
կայական նամակը :


Սոյնպէս Շատախու , Ռշտունեայց , Խի-
զանու , Մոկաց , Հայոց Չորոյ , Քիւրտիս-
տանու և այլ թեմական ժողովուրդն ի-
րենց բազմակնիք հանրագրութեամբքը
կը հաստատեն ըսելով թէ՛ « մենք մեր
յօժարութեամբ , մեր ընտրութեամբ
կնքեալ պայմանագիր Խաչատուր Սրբազա-
նի ձեռք տուած , աղաչանօք (և տեղ մ'ալ
իբր բռնի) և հարկիւ կաթուղիկոս օժել
տուինք :

Հակառակ այսմ եղածներն են ,

1864 Նոյեմբեր 13 , Աղթամարայ թե-
մական ժողովրդեան մի հանրագրութիւնք
որոյ ներքև 200 էն աւելի ստորագրու-
թիւն կայ :

1865 Յունվար 30 , Ոստան Գաւառի ժո-
ղովրդեան 35 ստորագրութեամբ նամակը :

Այս երկու գրերն ալ կը տեղեկացնեն
մեզ թէ՛ Խաչատուր Սրբազան , կաթուղի-
կոսական աստիճանն իր նախորդի ձեռ-
քէն կորզած է :



2.

Մահ Պետրոս կաթուղիկոսի

Խաչատուր Սրբազանի կաթուղիկոս
օժուելէն երկու օր ետքը՝ մինչդեռ ըստ
վկայութեան Վանայ կառավարչին և այլ
մասնաւորաց գրութեան , Վանայ ծովն
երկու օր փոթորիօք կը ծփայ , և Միսրա-
նութիւնք միանգամայն հոն դացող Հա-
րիւրաստն և Զապիէյէներն ներս 'ի կըզ-
զին փակուած կը մնան , դուրսը Պետրոս
կաթուղիկոս հիւանդ վիճակի մէջ Փշա-
վանց գիւղն առանձնացած կ'ըլլայ Էօթէ-
եան կոչուած Մանուկ անուն աղգայնոյն
տունը , 1864 Սեպտեմբեր 28 երկուշաբ-
թի գիշեր սրառկած տան երդիքէն հրա-
ցանի դնդակով կը զարնուի և կը վախճա-
նի :


Սոյնը հաստատող գրութիւնք ,
Վանայ կառավարչի քննութեանց տե-
ղեկագիրը :

Ազգային երկու քննիչ Արքեպիսկոպո-
սաց տեղեկագիրը :

1864 Հոկտեմբեր 2 , Իգնատիոս Եպիս-
կոպոսի մէկ նամակը :

1864 Դեկտեմբեր 1 , Իգնատիոս Ե-
պիսկոպոսի մէկ նամակը :

Եւ այլ թէ պաշտպանողական և թէ
ամբաստանողական գրերն միաբան կը վը-
կայեն սոյն եղելութիւնք կատարուած
ըլլալ Փշավանց գիւղը՝ Մանուկ անուն աղ-
գայնոյն տան մէջ :



Է.

Քննութիւն եւ արդիւնք ոճրագործութեան
Մահուանն Պետրոսի Կաթողիկոսի .

1864 Սեպտեմբեր 26 – 28 եւ Հոկտեմբեր
բեր 1 – 2 թուով անմիջապէս հեռագր-
րով եւ թէ նամակներով խաչատուր Սրբ-
բազանի Կաթողիկոսանալու լուրն եւ թէ
Պետրոս Կաթողիկոսի անակնկալ մահ-
ւան գոյժը՝ հետզհետէ կուգան Ազգային
Կեդրոնական վարչութեան ատենին կը-
հասնին :

Ազգային վարչութիւնը 1864 Հոկտեմբ-
բեր 29 ին խառն ժողով կազմելով կ'որո-
շէ թէ Պետրոս Կաթողիկոսի սպանման
ոճրագործութիւնը քննել եւ անոր հեղի-
նակները գտնել Բ. Գրան գործն է . ուս-
տի հարկ կը դատի այս մասին Թագրիբ
գրել առ Բ. Գուռը : Իսկ խաչատուր
Սրբազանի նկատմամբ ալ՝ Կաթողիկո-
սութիւնը կերպով մը յափշտակած է ը-
սելով ապօրինաւոր եւ անընդունելի Կա-
թողիկոս կը հրատարակուի , միանգա-
մայն կ'որոշուի ղխաչատուր Սրբազան Լիմ
անապատն արսորել եւ այս հրամանն ըն-
դունելու համար գարձեալ Բ. Գուռը
Թագրիբ կը գրուի :

(Տես Քաղ. ժողովոյ ԺԵ. նիստ , 1864
Հոկտեմբեր 29 , երես 355 :

Այսպէս Քաղաքական ժողովոյ ԺԵ. նիս-
տի մէջ 1864 Նոյեմբեր 13 , երես 376 . Աղ-
թամարցիք բողոք կ'ամբառնան Աղթամա-
րայ Աթոռոյ Միաբան Ղազար , Սարգիս ,
Յակոբ Եպիսկոպոսաց եւ Ղազար ու Մխիթար
վարդապետաց գէմ , եւ զորս Պետրոս Կա-
թողիկոսի սպանման պատճառ եւ ապա-
գայ չարեաց գրգիռ անուանելով կուզեն
ու կը պահանջեն Ազգային վարչութե-
նէն որ խաչատուր Սրբազանի հետ Կ. Պո-
լիս բերուին եւ հոս դատուին :

Քաղաքական ժողովը կ'որոշէ որ յիշեալ
չորս Եպիսկոպոսներն եւ երկու վարդա-
պետներն ալ Լիմ անապատը զրկուելու

համար . Թագրիբ գրուի առ Բ. Գուռն ,
ընդ որ միանգամայն կ'որոշէ որ Պետրոս
Կաթողիկոսի սպանման հեղինակը գտնելու
համար վանայ տեղական Կառավարութեան
դատական տտեանին մէջ ըլլալիք քննու-
թեանց Ազգային վարչութեան կողմէ
քննիչ կարգուին վանայ Առաջնորդ Գեր-
Տ. Իգնատիոս Սրբեպիսկոպոս եւ Կարնոյ
Առաջնորդ Գեր. Տ. Յարութիւն Սրբե-
պիսկոպոս , որպէս զի մինչ ցաւարտումն
քննութեանց ներկայ գտնուին հոն :

Ազգային վարչութեան խառն ժողովոյ
յիշեալ որոշումները վանայ Առաջնորդին
կը հաղորդուին , Առաջնորդը գործադրու-
թեան կ'սկսի եւ Գաւառական ժողով գումա-
րելով խաչատուր Սրբազանի յօժարութիւ-
նը կ'առնու Լիմ անապատը երթալու ,
ինչպէս 1864 Դեկտեմբեր 19 եւ 25 ամսա-
թուովք գրած նամակաց մէջ կը յիշատա-
կէ ասի Իգնատիոս Սրբազան թէ՛

« Մեր խոստման համեմատ այս երկու-
շաբթի օրս ժողովեցինք քաղաքացւոցմէ
քսանի չափ ակնաւոր եւ խաղաղասէր
անձինս , որք եկին ներկայացան ժողովին
խաչատուր անվաւեր Կաթողիկոսն , նո-
րին միաբան երեք Եպիսկոպոսունք , Թօ-
փուղեան Յակոբ Եպիսկոպոսն եւ բոլոր
Միաբան վարդապետներ ... նոյն հանդիսի
մէջ կարդացինք Ձեր վեհափառութեան
ղրկած Ազգային խառն վարչութեան վը-
ճիռն , եւ ապա անվաւեր Կաթողիկոսին
հարցուցինք թէ՛ կը հնազանդիս Ազգային
վարչութեան վճռոյն , կ'երթաս Լիմ ա-
նապատը , որ ամենայն յօժարութեամբ
յանձնառու եղաւ երթալու . բայց միան-
գամայն խաչատուր Սրբազան իր Կաթո-
ղիկոսութիւնը անվաւեր եւ ապօրինաւոր
հրատարակուելուն համար իւր սրտի ցա-
ւըն կը յայտնէ թէ , ինչ պատճառաւ
վարչութիւնը առանց մանրամասն եւ հա-
սուն քննութեան զինքը անպատուեց :

(Դեկտեմբեր 19 ի գրած նամակաւն
կը յիշէ Իգնատիոս Սրբազան) :

Ինչպէս սոյն գրութեանէն կը հաստատու-
ուի թէ՛ խաչատուր Սրբազան հնազանդու-

Թիւն կ'ընծայէ Ազգային վարչութեան վճռոյն, սակայն վանայ կառավարիչն կ'արգիլէ ասի առարկելով թէ՛ խաչատուր Սրբազան կասկածանաց ենթակայ է Պետրոս կաթուղիկոսի սպանման նկատմամբ, և թէ՛ դատաստանի ներքե է, ինչպէս իգնատիոս Սրբազան իր 1864 Դեկտեմբեր 19, գրած նամակաւն կը յայտնէ ասի :

« Ըստ պատահման կուսակալին ալ ծանօթութիւն տուինք կ'ըսէ առ մեզ հասած հրամանագրոյն համար, նորին վսեմութիւնը առ այս յայտնեց թէ՛ իւր ձեռքը Բ. Դոնէն հրամանագրութիւն ունի, որով յիշեալ կաթուղիկոսը դատաստանական քննութեան ներքե է, մինչև քննութիւնը չըրանայ չսլիտի թոյլ տրուի Անապատ երթալը » :

Այսպէս խաչատուր Սրբազան և թէ՛ Աղթամարոյ Միաբանութիւնը կասկածելի համարեալ քննութեան կ'ենթարկուին և վանայ Առաջնորդարանի մէջ կ'արգիլուին :

(իգնատիոս Սրբազանի նամակը կը յիշէ 1864 Հոկտեմբեր 2 ին գրուած) :

Պետրոս կաթուղիկոսի սպանման ոճրագործութեան քննութիւնը կ'սկսի 1864 Սեպտեմբեր 28 ին և կը տևէ մինչ 1865 ապրիլ 16 : Նախ Փշաւանց գիւղն և յետոյ վանայ Տեղական կառավարութեան դատաստանական ատենին մէջ :

Փշաւանց գիւղն առաջին աւուրքննութեան՝ վախճանեալ Պետրոս կաթուղիկոսի մարմինը զննելով կը տեսնան որ գրնտակը աջ ուսէն մտեր և կուրծքէն ելեր և արիւն ալ վազեր է :

Սոյն ոճրագործութեան հեղինակին ուղղալը հարցուեր է թէ՛ քովի պառկող ներէն և թէ՛ ուրիշներէն, Պետրոս կաթուղիկոսի եղբոր որդին խաչատուր պատասխաներ է թէ՛ ինքը մեռնելէն վերջը իր կտակին համեմատ գոպոսը խօթեր և գնտակով զարկեր է :

Ասկէ ետքը վանայ տեղական կառավարութեան դատական ատենին մէջ կ'ըս-

կըսի քննութիւնն, ուր Գեր. իգնատիոս Արքեպիսկոպոսն ալ ներկայ կը գտանի և կրկին հարցաքննութիւն կ'ըլլայ, այս հարցաքննութեան մէջ յիշեալ խաչատուր իր խօսքը կը փոխէ և կ'ըսէ :

« Քաւ լիցի, այդ ոճրագործութիւնը ես չըրի, նոյն երեկոյին երկու մարդ տանիքէն հրազէն պարսեցին, մէկը զարկաւ և Պետրոս կաթուղիկոս աղիողորմ ձայն մը հանելով հոգին աւանդեց, մենք և ուրիշները քնացած ըլլալով հրազէնի ձայնէն արթնցանք : — Հարցուեցաւ թէ՛ — ինչո՞ւ առաջ այսպէս չխոստովանեցաւ և ի՞նչ էր պատճառը, պատասխանեց — « խաչատուր Եպիսկոպոսը նաւամատոյցը ինձ գաղտնի կերպով ըսաւ և պատուիրեց թէ՛ դու այսպէս ըսէ և ես դքեզ կազատեմ, ես ալ այն կերպով խոստովանեցայ » :

Այսպէս վկայեր է նաև Պետրոս կաթուղիկոսի ձեռնատուն Յակոբ վարդապետն :

Իգնատիոս Սրբազան 1864 հոկտեմբեր 2 ին գրած նամակաւը սուտ կը հանէ խաչատուրին և Յակոբ վարդապետի յիշեալ խօսքերն :

« Բանտարկել արաւ կ'ըսէ առաջնորդարանին մէջ բոլոր Եպիսկոպոսներն և վարդապետներն Աղթամարու, որոց հետն էր նաև յիշեալ Յակոբ վարդապետն՝ որուն գիշեր ատեն երբոր հարցուցի, պատասխանեց թէ՛ ես այդ խօսքն սուտ ըսի, խաչատուր կաթուղիկոս և Եպիսկոպոսներն այդպէս բան մը չըսին խաչատուրին, ես սխալեցայ և շուարեցայ ևն » :

Այս մասնաւոր քննութիւններէն ետքը Բ. Դրան հրամանաւ կրկին քննութեան կը ձեռնարկուի և ուր կարնոյ Յարութիւն Սրբազանը ևս ներկայ կը գտանի :

վանայ տեղական կառավարութեան դատաստանի վերջին քննութեան տեղեկագրին մէջ կը կարդանք հետեւեալ տողերն,

« Բ. Դոնէն հրամանագիր մը հատաւ, որով պատուէր կ'ըլլար թէ՛ խնդրոյն քննութեանը կարնոյ հայոց առաջնորդը Գեր. Յարութիւն Սրբազանն ալ ներկայ գտնը-

ւի , այս բարձրագոյն հրամանին վրայ տեղեկագիրը ետքի ձգելով Յարութիւն Սըրբազանին գալստեանը սպասել հարկ եղաւ : Յիշեալ առաջնորդը ժամանելով իր ներկայութեանը խաչատուր եպիսկոպոսը և ուրիշ պէտք եղածները ժողով բերուեցան և հարցաքննեցան , և թէ և ամեն ջանք 'ի գործ դրուեցաւ , սակայն վերը յիշուածներէն զատ ուրիշ ծայր մը չբռնուեցաւ . և իստ հաւանականաբար հասկցուեցաւ որ՝ սոյն ոճրագործութիւնը Եուսուֆ և Շահին անձերէն մէկը բրած է , որոնք թէ յայտնի և թէ գաղտնի կերպով կը փնտռուին և Աստուծով երբ ձեռք բերուին , սոյն եղեռնագործութեան շարժառիթը երևան պիտի ելլէ և այն ատեն խնդիրը կատարելապէս պիտի տեղեկագրուի Բ. Դրան : Քննութեանց մանրամասն պարագաները լաւ մը իմացուելու համար թղթերը ներփակեալ կը մատուցանեմք ներկայ տեղեկագրիս հետ » :

1281 Զիւլիճճէ 3 , 1281 Ապրիլ 16

Վանայ կառավարչի տեղեկագրի մէջ հաւանականաբար սպաննութեան ոճրագործութիւնը կուտայ երկու քրդերու : Սոյնպէս կը տեղեկագրեն նաև երկու քրննիչ կարգուած Արքեպիսկոպոսունք :

« Յօրէ անտի վախճանման Պետրոս կաթողիկոսի գրեթէ քննութիւնն սկսեալ շարունակէր յատենի Տեղական կառավարութեան . և թէպէտ յարդեանց անտի քննութեան յայտնեալ էին եղեռնագործքն , 'ի վերայ այսր ամենայնի ձգնին Տաճիկը յԱղգիս վերայ ձգել զոճրագործութիւնն կարծիքական գաղափարօք դարձեալ վերստին շարունակեցաւ նոյնցաւալի գործոց քննութիւն յատենի Բարձրապատիւ կուսակալին 'ի քանի նիստըս , ուր մեր երկաքանչիւրքս միշտ ներկայ գտաք , թէ յառաջին և թէ 'ի վերջին քննութեանց արդեանց յայտնեցաւ և ստուգեցաւ եթէ յիշեալ Պետրոս կաթողիկոս հարուածով հրացանի սպանեալ են , և սպաննողքն են յԱւանէն , Գաւաշու , Վրկունիս գիւղացի քիւրտ Շա-

հին և շկերտ գիւղացի Եուսուֆ , 'ի Փշավանց գիւղին 'ի Գոմոցի տան Մանուկ անուն Հայազգոյն , որ Էօթէեան կոչի , և չարագործ սպաննողք քիւրտք , երկոքեան այժմիսկ փախուցեալ կան 'ի խորս Քիւրտիստանու անգիտելի 'ի մարդկանէ և անյայտ իսկ 'ի կառավարութեան մինչևցայսօր , թէ և կառավարութիւնն ազդու միջոցս 'ի ձեռս առեալ հետևի գտանել » :

Քննիչ եպիսկոպոսք իրենց տեղեկագրին մէջ կը յաւելուն թէ , « Ըստ վկայելոյ ականատեսիցն երկու ամօք յառաջ թունաւորեալ էին զՊետրոս կաթողիկոս » :

Յիշեալ երկու տեղեկագրերն թէ՛ վանայ կառավարչին և թէ՛ քննիչ Արքեպիսկոպոսաց կուգայ կը հասնի Ազգային Վարչութեան ատենին : 1865 Յունիս 3 ին խառն ժողով կը կազմուի (Երէս 7 - 12) և ուր կը կարդացուին տեղեկագրերք :

Խառն ժողովոյ սոյն նիստի Ատենագրութեան մէջ հետևեալ տողերը կը կարգանք :

« Խառն ժողովն այս նիւթին վրայ խորհելով ըստ որում Քննիչները կուսակալին Մազպաթային վրայ առաւելապէս կը թընած են , թէ և անվերջնական վճիռ չէ , ըստ որում տեղեկագիրն սպանման գործողութեան վրայ այնչափ երկար տեղեկութիւն չէ տուած որչափ Պետրոս կաթողիկոսի կենսագրութեան վրայ , ըստ որում Խաչատուր եպիսկոպոսին օժուելէն անմիջապէս ետքը Պետրոս կաթողիկոսին սպանումը կը պատահի , ինչպէս որ Նարեկայ Վանուց Վանահայր Յովսէփ վարդապետ մանր պարագայիւք կը հաստատէ գրովն , « ըստ որում սպաննողքիւրտերուն մէկուն համար խաչատուր եպիսկոպոսի սպասաւորներէն ըլլալը հաստատող գրութիւն կայ , որ կասկածելու իրաւունք կուտայ այս կասկածելի կէտերուն համար խառն ժողովն տեղեկագիրը պակասաւոր , և եղած քննութեանց արդիւնքը անորոշ հրատարակեց » :

Ասկէ ետքը խառն ժողովոյ որոշմամբ սոյն Տեղեկագրերն և այլ գրութիւնք կը

յանձնուին Ազգային Վարչութեան կրօնական Ժողովոյ, որպէս զի հարկ եղած քննութիւններն ընելով ըստ այնմ տեղեկագրէ :

1865 Յունիս 24ին կրօնական Ժողովն իր Տեղեկագիրը կը ներկայացնէ և որոյ պարունակութեան մէջ, սպանութեան ոճրագործութեան մասին հետեւեալ տողերը կը կարդանք :

« կրօնական Ժողովս յիշեալ Տեղեկագրին վրայ իւր դիտողութիւնները կը յայտնէ այսպէս .

Նախ՝ քննիչ Եպիսկոպոսներն Եուսուֆ և Շահին անուն քիւրտերուն կուտան ըստ սպանութիւնը իրենց ոյժը հիմնելով կուսակալին Մազպաթային վրայ, բայց ըստ որում այս Մազպաթային նայելով սպաննող համարուած քիւրտերը ձեռք անցած չեն ու փախած են, վասն որոյ և դործը վճռական կերպով վերջացած չհամարիր . . . :

Երկրորդ՝ երբ Նարեկայ Վանուց Վանահայր Յովսէփ (1) վարդապետ գրաւոր կերպով և ուրիշ հաւատարիմ անձինք բանիւ բերանոյ կը վկայեն թէ՛ ամբաստանեալ քիւրտերէն մէկը խաչատուր Եպիսկոպոսին սպասաւորն է, այս քիւրտին երևան ելլելէն և դատաստանի մտնելէն առաջ կրօնական Ժողովս չկրնար ըսել թէ՛ խաչատուր Եպիսկոպոս կրնայ արդարաւնալ հասարակաց կասկածանքէն » :

Ասկէ ետքը 1866 թուականին Ազգային Վարչութեան կրօնական և Քաղաքական Ժողովոց որոշմամբ խառն Յանձնաժողով մը կը կազմուի Ս. Էջմիածնի, Սոյ և Աղթամարայ կաթողիկոսական խնդրոց քննութեան համար :

Սոյն խառն Յանձնաժողովոյ 1866 փետրվար 18ին ներկայացուցած Տեղեկագրոյն մէջ Աղթամարայ խնդրոյն վերաբերեալ

ԾԱՆՕԹ.—(1) Նարեկայ Վանուց Վանահայր Յովսէփ վարդապետի կրօն. ժողովոյ եւ խառն Յանձնաժողովոյ Տեղեկագրաց մէջ յիշուած նամակն՝ որ գրած է 1864 Նոյ. 28ին. յետս կոչումն ըրած է ինք 1867 Յունիս 6ին ուրիշ նամակաւ մը, զոր արդէն յիշատակեցինք :

հետեւեալ խօսքերը գտանք .
« խառն Յանձնաժողովս քննիչ Եպիսկոպոսաց և կրօնական Ժողովոյ Տեղեկագրերն և թէ մասնաւորաց և թէ Բ. Դրան կողմանէ եկած գրութիւններն աչքէ անցընելով հետեւեալ դիտողութեան արժանի կէտերուն վրայ Պատկառելի Ժողովոյ ուշադրութիւնը կը հրաւիրեմք . . . :

Քննիչ Եպիսկոպոսաց առ Վարչութիւնն ուղղեալ տեղեկագրով Պետրոս կաթողիկոսի եղեռնագործութեան մասին կ'արգարացնեն զխաչատուր կաթողիկոս, իսկ Բ. Դուռն ալ Վանայ կուսակալութեան կողմէն իրեն ուղղուած տեղեկագրին մէջ ուրստորագրած են նաև քննիչ Եպիսկոպոսները, տեսնելով որ գործը վճռական կերպով լմնցած չէ, ուրիշ Եպիսկոպոսներու հետ խաչատուր Եպիսկոպոս ալ կասկածելի կը համարի » :

Ասկէ ետքն կը յաւելու թէ,
« խառն Յանձնաժողովս քննիչ Եպիսկոպոսաց և Բ. Դրան գրութիւններն աչքի առջև ունենալէ ետքը քննիչ Եպիսկոպոսաց Տեղեկագիրը բացատրութեան կարօտ գտաւ և երկար ժամանակի գործ » :

Ասոր կարճ միջոց կ'առաջարկէն որ՝
« Աղթամարայ խաչատուր Սրբազան Բ. Դրան հրամանագրով կիսորոս կղզին հեռացնեն մինչև որ երկու եղեռնագործ քիւրտերը գտնուելով նորէն քննութեան ձեռնարկուի » :

Պետրոս կաթողիկոսի սպանման եղեռնագործութեան նկատմամբ Ազգային Պարբարքարանի Բ. Դրան հետ եղած թղթակցութիւններն և սոյն խնդրոյն բաւական լոյս կուտան, զի ի սկզբան խաչատուր Սրբազանի և թէ Աղթամարայ Միաբանութեան վրայ եղած կասկածելիութիւնը հետզհետէ թեթեւցեր են, թէև վերջնական կերպով խնդիրն լրացած չհամարուիր, այսու ամենայնիւ ինչպէս սխալութեան ընթացքէն կ'երևի որ բոլոր քննութեանց մէջ որ և է մի կասկած ստուգութիւն գտած չէ Աղթամարայ Միաբանութեան և խաչատուր Սրբազանի վրայ :

Աղթամարայ կաթուղիկոտական խնդրոյն համար Ազգային Պատրիարքարանի կողմանէ Տաճկաց 1282 Ձիլհիճճէ 19 Բ. Դուռը Թագրիւր մը գրուած է, որոյ պարունակու թիւնն է հետեւեալն .

« Չեր բարձրագոյն հրամանի համեմատ պէտք եղածը տնօրինելու համար ժողովը խորհելու և կարգադրելու վրայ է թէև, սակայն տեղէն հետզհետէ եկած բազմաթիւ Մահզէրներէն և գրութիւններէն կ'իմացուի թէ՛ խաչատուր Եպիսկոպոսի մասնակցութիւնը բնաւ չկայ և թէ՛ խաչատուր Եպիսկոպոս կանխաւ կաթուղիկոս օժուած ըլլալով ամբողջ ժողովուրդը նորա հաստատուիլը կը խնդրէ : խաչատուր Եպիսկոպոս հարցաքննութեան ենթարկուած ըլլալով ժողովրդեան խնդրանաց համաձայն կաթուղիկոս ընդունիլն անկարելի ըլլալը թէև ժողովրդեան իմաց տրուեցաւ, սակայն թախանձանօք իրենց նախորդ խնդիրը կրկնեցին և որովհետև խնդիրը վերջանալու համար խաչատուր Եպիսկոպոսին հարցաքննելը լրացնել և աւարտել հարկ է, ուստի կը խնդրեմք որ շուտով լրացնելու և տեղեկագրելու համար կարնոյ կուսակալութեան ուղղեալ հրամանագիր մը շնորհ ընել բարեհաճիք » :

Սոյն Թագրիւրին 'ի պատասխան հետեւեալ իմաստով ծանուցագիր մը կուգայ 'ի Պատրիարքարան, Տաճկաց 1283 ձէմազիլ էվվէ 8, Ալի փաշայի ստորագրութեամբ թէ՛

« Մինչև որ Եուսուֆ և Շահին երկուքիւրտերը չձերբակալուին և չխոստովանուին, խաչատուր Եպիսկոպոս հիմակու ընէ ոչ անպարտ կ'ըսուի և ոչ յանցապարտ, ուստի և այժմէն չկրնար կաթուղիկոսութեան մէջ հաստատուիլ » :

Իսկ խառն ժողովոյ Դ. նիստի մէջ 1866 Ապրիլ 8, Երես 14-15, հետեւեալը կը կարդանք սոյն խնդրոյն նկատմամբ .

« Աղթամարայ կաթուղիկոսին համար հին թղթոց և արձանագրութեանց մէկ մասին համաձայն խաչատուր կաթուղիկոսին վրայէն, նախորդ կաթուղիկոսին սպան

ման եղեռնակից գտնուած ըլլալու կասկածելիութիւնը խիստ տկարացած ըլլալով, միւս կողմանէ ալ վարչութիւնը կարնոյ վանայ և լիմ անասլատի Եպիսկոպոսներէն տեղեկագիր ընդունելով որ Տեղացիք կրօնափոխութեան պիտի դիմեն, եթէ խաչատուր կաթուղիկոսութիւնը չվաւերացուի, որոշեր է Բ. Աալի փաշայի կամքն իմանալ նոյն Եպիսկոպոսին վրայօք : Աալի փաշայն բերանացի յայտնելով որ Դրան քաղաքականութեան դէմ գործած չըլլար և կառավարութեան չդաչիր, թէ որ Ազգն ուզէ զխաչատուր ընտրել կաթուղիկոս եթէ անբասիր է և կուզուի 'ի պաշտօն կոչել, պէտք է Տեղեկագիր շինուի Պատրիարքարանէն և զրկուի որ Մէճլիսի վալային հաղորդեմ ըսած է » :

Ասկէ ետքը 1869 ին Աղթամարայ Միաբանութիւնը և թեմական ժողովուրդք խաչատուր Սրբազանի նկատմամբ կարնոյ կուսակալութեան հանրագրութիւն մը կը ներկայացնեն խնդրելով խաչատուր Սրբազանի իւր կաթուղիկոսական գահը դառնալը . Բ. Դուռը սոյն հանրագրութիւնը ծանուցագրով մը հանդերձ կը հաղորդէ Ազգային Պատրիարքարանի և հարկ եղածը գործադրել կը հրամայէ, որոց ահաւասիկ սլատածէնն ,

Ա.

« Չայս նուագ ևս մատուցած աղերսագիր մը՝ որ խաչատուր Եպիսկոպոսի Աղթամարայ կաթուղիկոս հաստատուիլը կը խնդրուի, ներփակեալ կուղարկեմք 'ի Չեզ որ 'ի նկատի առնելով պարտ ու պատշաճը գործադրելու շնորհ ընէք » :

1286 Ձիլգատէ 2, 1285 քեանունի սանի 22 :

Բ.

« Աղթամարցոց ընդհանուր մէկ մահզէրը որ Աղթամարայ կաթուղիկոսի խնդրոյն կը վերաբերի և որ կարնոյ կուսակալութեան մէկ գրութեամբը հասած է մեզ, ներփակեալ կուղարկեմք Չեզ որ նկատողու

Թեան առնելով սկսեք եղածը գործադրէք
և արդիւնքը հաղորդէք :

1287 Ձիլգատէ 19, 1286 քեանունի տա-
նի 28 :

Ինչպէս կ'երևի Բ. Դուռը վերջին ան-
գամ առ Ազգային Պատրիարքարան զրկած
սոյն երկու ծանուցագրովն (առանց բը-
նաւ ասկէց առաջ 1283 ձէմագիլ էլվէլ 8
ամսաթուով զրկած ծանուցագիրը յիշե-
լու, որով կերպով մը Խաչատուր Սրբա-
զանի կաթուղիկոսութիւնը կ'արգիլուր,)
Աղթամարայ կաթուղիկոսական խնդրոյն
կարգադրութիւնը և պարտ ու պատշաճ
տնօրէնութիւնը բողոքովին Ազգային Պատ-
րիարքարանի կը յանձնէ :

Ատոնցմէ ետք կուգան Աղթամարայ, Ղիմ
ու կտուց անապատի Միաբանութեան և
այլ թեմական ժողովրդեան բազմաստորա-
գիր հանրագրութիւնք որք միահամուռ կը
վկայեն և Աստուած վկայ կը կոչեն թէ՛
Աղթամարայ Միաբանութիւնը, և թէ՛ Խա-
չատուր Սրբազան, Պետրոս կաթուղիկոսի
սարանման եղեռնագործութեան մէջ բնաւ
մաս չունին, և թէ՛ սպաննողք են այն
երկու քիւրտերն՝ որք ՚ի վաղուց ոխ ու-
նեցած են եղեր Պետրոս կաթուղիկոսի
դէմ :

Սոյնը հաստատող գրութիւնք են,

1865 Յունիս 19, Աղթամարայ Խաբա-
նութեան և թեմական ժողովրդեան մէկ
հանրագրութիւն :

1865 Սեպտեմբեր 24, Աղթամարայ Միա-
բանութեան և թեմական ժողովրդեան
հանրագրութիւն :

1866 Յունիս 20, Վանայ իշխանաց վը-
կայական նամակն :

1864 Հոկտեմբեր 1, Աղթամարայ Միա-
բանութեան և թեմական ժողովրդեան
մէկ հանրագրութիւն :

1864 Հոկտեմբեր 2, Աղթամարայ Միա-
բանութեան և թեմական ժողովրդեան
մէկ նամակն :

1864 Դեկտեմբեր 12, « Խորհրդական
խոստովանութեան » վերնագրով գիրն :

1864 Դեկտեմբեր 29, Աղթամարայ Միա-
բանութեան և թեմական ժողովրդեան

մէկ նամակն, եւ այլ, Ծատախու, Խիղա-
նու, Մոկաց, Ռչաուենեայ, այոց Զոբյ և
Խըրտիւսթանու ժողովրդեան բազմա-
ստորագիր հանրագրութիւնք :

Հակառակ այսմ՝ որ Աղթամարայ Միա-
բանութիւնը և խաչատուր Սրբազան Պետ-
րոս կաթուղիկոսի սարանման պատճառ և
ասպարայ չարեաց գրգիռ կ'անուանեն,
կայ մէկ ժողովրդային հանրագրութիւն
մը 1864 Նոյեմբեր 13 ին գրուած, և զոր
նշանակեալ կայ քաղաքական ժողովոյ ժե-
նիստի մէջ, Սոյն հանրագրութիւնը ըս-
տորագրողք կ'ամբաստանեն զԽաչատուր
Սրբազան, սակայն իրենց ամբաստանու-
թեան որ և է ասպացոյց մէջ բերած չեն :

Այսպէս 1865 Յունիս 30 Ոստան գա-
ւառի ժողովրդենէն 35 անձանց ստորա-
գրութեամբ եղած Մահսէրագրութիւնը
որ իրենց սրտի տարօրինակ գայթակղու-
թիւնը կը յայտնեն Աղթամարայ Միաբա-
նութեան վրայ՝ Պետրոս կաթուղիկոսի
մահուան առթիւ, և այս ՚ի լրոյ առած
եմք կ'ըսեն :

Ը

ՎՃԻՌ ԵԿԵՂԵՅՍԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԺՈՂՈՎՈՅ

1866 Յունիս 12 ին՝ ընդ նախագա-
հու թեամբ Ամեն. Պօղոս Ս. Պատրիարքի
Թաքթաքեան, Եկեղեցական Համագու-
մար ժողով կազմուելով վճիռ կ'արձակէ
թէ՛

« Վիճակային Եկեղեցական ժողովս տե-
ղեկանալով թէ՛ Խաչատուր Եպիսկոպոս
Աղթամարայ հանգուցեալ Պետրոս կա-
թուղիկոսի կենդանութեան ատեն ինք-
զինք կաթուղիկոս օժել տուեր է, ան-
վաւեր վճռեց անոր կաթուղիկոսու-
թիւնը » :

Յանձնաժողովս Եկեղեցական Համագումար ժողովոյ սոյն նիստի (1866 Յուլիս 12ի) ատենագրութիւնը չկարաց գրտնել, որպէս զի կարենար տեղեկանալ թէ՛ ինչ հիման վրայ յիշեալ վճիռը հաստատուած էր, այլ միայն ներկայութեան ըստորագրութեան արձանագրութիւնը գրտաւ, ուրկէ տեղեկացաւ թէ՛ ներկայ գտնուող ինը Եպիսկոպոսներէն միայն եօթը և տասն և հինգ Վարդապետներէն միայն եօթը ստորագրած են յիշեալ վճիռը, հետեաբար երկու Եպիսկոպոսուհք և ութ Վարդապետք ստորագրած չեն:


Եկեղեցական Համագումար ժողովոյ սոյն վճիռն Աղգային Երեսփոխանական ժողովոյ ատենը կ'ելլէ 1866 Յուլիս 22ին ժողովոյն հաւանութիւնն ստանալու:

Երեսփոխանական Ընդհանուր ժողովը կ'ընդունի վերոյգրեալ վճիռն և թափուր կը հրատարակուի Աղթամարայ Աթոռն:

Ասկէ մէկ տարի ետքը՝ այսինքն 1867ին Պօղոս Ս. Պատրիարքը վիճակաւոր Եպիսկոպոսներն 'ի Պօլիս հրաւիրելով անոնց կարծիքն իմանալ կ'ուզէ Աղթամարայ Աթոռոյն նկատմամբ, անոնք ալ իրենց կարծիքը կը յայտնեն տեղեկագրով մը, 1867 Սեպտեմբեր 19, ուրկէ կը քաղեմք հետեւեալ տողերն.

«Աղթամարայ Կաթուղիկոսական խընդրոյն նկատմամբ Պօլսոյ Եկեղեցական Համագումար ժողովն արդէն իր վճիռը տրւած է, որ անվաւեր դատեր է
, ուստի այդ վճռոյն վրայ կարծիք ուզելը 'ի վիճակաւոր Եպիսկոպոսաց աւելորդ կը համարիմք. և եթէ գործադրութեան մասին դժուարութիւններ ծագած կան . . . , հարկ է դիմել Արարատեան Ընդհանրական Կաթուղիկոսին . . . »:

Սոյն Տեղեկագիրը ստորագրած են եօթն Սրբազան Եպիսկոպոսուհք:



Թ

Աղթամարայ Միաբանութեան եւ Թեմական ժողովրդեան 'ի Պապականութիւն դիմելը:

1866 Յուլիս 12ին երբ Եկեղեցական Համագումար ժողովն իւր վճիռն կուտայ և անվաւեր կը հրատարակէ Խաչատուր Սրբազանի Կաթուղիկոսութիւնը, և երբ Աղգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովն այս վճռոյն իր հաւանութիւնը կ'ընծայէ, ասկէ ետքը Աղթամարայ Միաբանութիւնը և թէ Թեմական ժողովուրդք իսպառ յուսաբեկ վիճակի մէջ ինկած կ'սկսին ազատ բանակցութեան մտնել Պապական Եկեղեցոյն հետ, ինչպէս 1866 Ապրիլ 8, Խառն ժողովոյ Դ. նիստի մէջ կը կարդամք այս մասին թէ՛

«Միւս կողմանէ ալ Վարչութիւնը Կարնոյ, Վանայ և Լիմ Անապատի Եպիսկոպոսներէն տեղեկագիր ընդունելով որ Տեղացիք կրօնափոխութեան պիտի դիմեն, եթէ Խաչատրոյ Կաթուղիկոսութիւնը չ'վաւերացուի»:

Միաբանութեան Եպիսկոպոսաց և Վարդապետաց և թէ Թեմական Իշխանաց բազմակնիք ստորագրութեամբ երկու Հանրագրութիւններ՝ որոնցմէ առաջինը կը ժամանէ առ Անտօն Հասունեան 1867ին, իսկ երկրորդը Խաչատուր Սրբազան կը յաջողի ձեռք ձգել և արգելուլ. առաջին Հանրագրութիւնը ստորագրողք իրենց խորին հպատակութիւնը կը յայտնեն Հռովմայ Պապին և նորա այցելութեան ակնկալու կը մնան և իրենց այս ձեռնարկութեան պատճառ կը բերեն՝ Խաչատուր Սրբազանի յիւր Աթոռէն տարագրութիւնը, ուր և Պիոս պապն և Հռովմայ Եկեղեցին գլուխ ամենայն Եկեղեցեաց կը ձանչեն:

Սոյն Հանրագրութեան մէջ Խաչատուր Սրբազանի ստորագրութիւնը չկայ, և թէ որ և է միջամտութիւն, մանաւանդ թէ՛ Միաբանութեան և թէ՛ Թեմական

ժողովրդեան այս ազգամիաս դիտաւո-
րութիւնն յաջողած է ինք՝ խաչատուր
Սրբազան արգիլել:

1867 Մարտ 30ին թէոթու պօլսոյ Առաջ-
նորդ Պապական Ստեփան Եպիսկոպոսը կը
գրէ ըստ առաջարկութեան Հասունեանի՝
որ խաչատուր Սրբազան գրով մը և իր
ստորագրութեամբը փութայ յայտնել՝
աղերսարկուաց հետ համամիտ և համա-
խոհ ըլլալն և անկէ ետքը կըսէ ամեն բան
յաջողած է, և ուր սա նշանաւոր տո-
ղերը կը կարդամք:

«Տեղէդ գացած բաղմամբիւ ստորա-
գրութիւններով աղերսագիրը արդէն իսկ
տեղը հասած է, և նոյն աղերսագրով ծա-
նուցուած խնդրոյն կատարմանը ուրիշ
բան պէտք չէ, եթէ ոչ Ձեր Վեհափա-
ռութեան նոյն փառաքը ունենալու,
և աղերսարկուաց համամիտ և համախոհ
ըլլալնուդ՝ երկտող գրութեամբ մէկ ըս-
տորագրութիւնը՝ որուն որ ակնկալեալ
կ'սպասեն, և զորն որ, ապահով եմ որ
չէք ուշացներ, վասն զի թէ ժամանակը
և թէ պարագայները շատ յաջող են այս
գործոյն վճարմանը, մինչդեռ ոչ միայն
Մեծազօր Տէրութիւններնուս Հրովար-
տակներովը կը զօրանայ, այլ նաև յառա-
ջիկայ յունիս ամսոյն մէջ ՚ի Հռովմ Եպիս-
կոպոսաց Ընդհանուր ժողով ըլլալով թէ
Սրբազան Քահանայապետ Պիոս Թ. և թէ
ուղղափառ Տէրութեանց ազդու ձեռն
տուութեամբը ևս կը զարգանայ»:

Սոյն և թէ այլ այսպիսի գրութիւն ան-
պատասխանի թողած է խաչատուր Սրբա-
զան և որով յաջողած է սոյն որորդաց
ջանքն և իղձն ՚ի դերև հանել:

Ժ

Եկեղեցական Համագումար ժողովոյ վճռոյն
Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ Ատե-
նին նիւթ ըլլալը:

1867 փետրվար 10 ևն Եկեղեցական
Համագումար ժողովոյ վճռէն ետքը՝ Երես-
փոխանական Ընդհանուր ժողովոյ նիւա-
նին հանրագրութիւններ և բողոքներ կը
տեղան. Աղթամարայ թեմական ժողովը-
դեան կողմանէ Երեսփոխան կարգուած
երկից ազգայնոց ստորագրութեամբ՝ ուր
խաչատուր Սրբազանի անմեղութիւնը և
միաբանութեան և թեմական ժողովը-
դեան առ նորին Սրբազնութիւնն ունե-
ցած սէրն ու համակրութիւնը յառաջ
բերելով կը խնդրեն որ ՚ի պաշտօնէ զանի
կաթուղիկոս ճանաչեն և նորա ամօտի
յաջորդութիւնը պաշտպանեն:

Սոյնպէս մի քանի մասնաւոր նամակք
ուղղեալ առ Ազգային Խառն ժողովն և
առ Ս. Պատրիարքն:

Ընդհանուր ժողովոյ Ատենապետ Պէյը
կը յայտնէ թէ՝

«Ըստ որում արդէն Եկեղեցական Համա-
գումար ժողովն Աղթամարայ ինք-
նընաիր կաթուղիկոսի նկատմամբ կը վե-
ճիւր տուած է կը մնայ Ընդհանուր
ժողովին օրինաւոր նիստի մէջ այս խնդ-
րոյն վրայօք պէտք եղած վերջին անօրէ-
նութիւնը ընել»:

Ասկէ ետքը՝ կ'սկսի այս խնդիրը նիւթ
ըլլալ Երեսփոխանական Ընդհանուր ժողո-
վոյ ատենին:

1867 փետրվար 24 ևն Ընդհանուր ժո-
ղովոյ մէջ այս խնդիրն երևան կ'ելայ,
ուր տեղ ոմանք Եկեղեցական Համագու-
մար ժողովոյ Աղթամարայ կաթուղիկոսա-
կան խնդրոյն ըրած վճիւր կը պաշտպա-
նեն և ոմանք ևս կարծիք կը յայտնեն թէ
գուցէ Եկեղեցական Համագումար ժողո-
վըն իր այս վճռոյն մէջ սխալած ըլլայ, և
ոմանք թէ՝ այս խնդիրն իր բոլոր թղթե-
րովը Մայր Աթոռոյն յանձնուի, ՚ի մի բան

Ընդհանուր ժողովն Եկեղեցական ժողովոյ այս վճիռը տարակուսանայ կ'ենթարկէ, վասն զի նոյն իսկ Եկեղեցական Հայրերէն որմանք վարանումն ցոյց կուտան այս վճռոյն վրայ և հոս ու հոն տարբեր կարծիքներ կը յայտնեն, և ինչպէս՝ Ասրանեան Սահման փաշան Ընդհանուր ժողովոյ մէջ խօսած է թէ՛ (1867 փետրվար 24),

« Պօղոս Ս. Պատրիարքը յատենի խառն ժողովոյ Գործադիր Յանձնաժողովին ըսած լինի թէ՛ » — « Այն վճիռը շատ վեր 'ի վերոյ կերպիւ եղած է Համագումար ժողովին կողմէն, եթէ գործադրուի՝ Եկեղեցին վտանգի մէջ կ'ընայ » :

Ասոնք Ընդհանուր ժողովոյ ատենին մէջ կը խօսուին, և վերջապէս խնդիրը կախ կը մնայ, մինչ 1870 Յունվար 23, որոյ վերայ քիչ մը ետքը պիտի խօսինք :

ԺԱ


Խաչատուր Սրբազանի Բ. Դրան հրամանագրելով 'ի Մայրաքաղաքս բերուիլը :

Եկեղեցական Համագումար ժողովոյ վճռէն ետքը՝ 1866 Նոյեմբեր 14ին, խառն ժողովն իր Լ. նիստի մէջ (երես 103) կ'որոշէ որ խաչատուր Սրբազան մայրաքաղաքս բերուելու համար Բ. Դուռը թագրել գրուի, նոյնպէս գրով մ'ալ իրեն հաղորդուի :

Խաչատուր Սրբազան Մայրաքաղաքս բերուելու սա պատճառ կուտան Բ. Դուռն գրուած թագրի ին մէջ .

« Պատրիարքարանս ծանօթ խնդրոյն համար յիշեալ Եպիսկոպոսին կրօնապէս ընելիք հարցումներ ունենալով՝ անոր ամփոփանակեաց կերպի՝ Պարիսրարանս Գալը անհրաժեշտ ըլլալով և այս որոշումը այս անգամ իրեն ալ հաղորդելով կը խնդրեմք որ արդելք չլլայ Մայրաքաղաքս գալու » :

Սոյն թագրիւր կը կրկնուի 1867 Օգոստոս 10 ին, և ասկէ ետքը 1868 Հոկտեմբեր 12 խաչատուր Սրբազան Մայրաքաղաքս կը հասնի :



ԺԲ.

Խաչատուր Սրբազանի առ Ազգային Երեսփոխանական ժողովն եւ թէ՛ առ Ազգային Անդրօնական Վարչութեան մատուցած բողոքագրերը Համագումար ժողովոյն վճռոյն դէմ :

(Խաչատուր Սրբազան Մայրաքաղաքս գալէ ետքը երեք բողոքներ ունեցեր է, որոց պատճէնն հետեւեալներն են) :

Ա. ԲՈՂՈՔ

1870 ամի Օգոստոս 28 մատուցեալ առ Ազգային Ընդհանուր ժողովն :

« Ամենատառիւ Սրբազան Պատրիարք և վսեմաշուք Ատենապետ Ազգային Ընդհանուր ժողովոյ :

Աղթամարայ Սուրբ Աթոռոյ կաթուղիկոսութեան խնդիրը բացուելէն բաւական ժամանակ ետքը, Պօլսոյ մէջ գումարուած Եկեղեցական ժողովը իրեն հասած մասնաւոր գրութեանց վրայ հիմնելով վրձիռ մը արձակեր էր. այս վճռոյն վրայ բաւական ժամանակ անցնելէ ետքը, նախորդ Պատրիարք Պօղոս Սրբազանին օրով Պօլիս գալու հրամանն ընդունեցինք, և իբր ընդհանրութեան կամք համարելով հնազանդեցանք անմիջապէս՝ ինչպէս ասկէ առաջ եկած որոշմանց և տնօրէնութեանց, Համագումար ժողովոյն արձակած վճռէն ետքը մեր կ. Պօլիս կանչուելը անշուշտ Ատենի մը մէջ դատելու համար էր : Արդ՝ երկու տարին լրացաւ և տակաւին մեզ չ'իմացուցին թէ՛ ո՞վ է դատող և ո՞ր Ատենի մէջ և կամ ի՞նչ բանի համար կանչուեցանք 'ի Պօլիս. ուստի մեք բողոքելով նոյն համագումար ժողովոյն

վոյն առանց մեր ներկայութեան և առանց մենէ բացատրութիւն մը ուղերու արձակած վճռոյն դէմ, կը դիմեմք ընդհանուր ժողովոյդ, որ բաւ համարելով մեր եօթնամեայ անցուցած պարասոյ ժամերն և կրած վիշտերն . . . հաճիք վերջնական որոշում մը ընելու համար պէտք եղած միջոցները ձեռք առնելու, հերիք համարելով Ս. Աթոռոյն և խղճալի ժողովրդեան անխնամ կացութիւնը, որ քան զիմ դժբաղդութիւն կարեւոր խոց է իմ սրտին» :

Մնամ աղօթարար
(Ստորագրութիւն)

ԽԱԶԱՏՈՒՐ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ
ՀԱՅՈՑ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ

1870 օգոստոս 28

Ի Կ. Պօլիս Պատրիարքարանի Հայոց :

Բ. ԲՈՂՈՔ

1870 Սեպտեմբեր 11. մատուցեալ առ Ազգային ընդհանուր ժողովն :

«Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Կ. Պօլսոյ և Մեծ. Անդամք Ազգային Երեսփոխանական Ժողովոյ :

Արդէն երկու տարի է որ՝ Ազգային Վարչութեան հրամանաւ Վանէն ՚ի Կ. Պօլիս դալով ամենայն երկայնամտութեամբ կ'սպասեմք Աղթամարայ Ս. Աթոռոյ կաթողիկոսութեան նկատմամբ եղած Ազգային Վարչութեան տնօրէնութեանը :

Եւ ահա մինչդեռ Ազգային Երեսփոխանական Ժողովը կ'զբաղի Սոսյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց բազմամեայ խնդիրը վերջնական կերպիւ լուծել, բարեպատեհ առիթ կը համարիմք ներկայ գրութեամբ յայտնել՝ ինչ որ պատշաճաւ որ է և ինչ որ կարող է Երեսփոխանական Ժողովի ուշադրութեան արժանանալ :

Ինչպէս որ Աղթամարայ Ս. Աթոռոյ կաթողիկոսները նախնի ժամանակներուն մէջ օժումն ընդունած են առանց Ազգային Վարչութեան գիտութեանը, միայն

Թեմականաց և միաբանից հաւանութեամբ, նոյնպէս կատարուած է և մեր կաթողիկոսական օժումն :

Եթէ այս կէտն է մեր ամբաստանութեան շարժառիթը՝ ինչպէս կը լսեմք, այս մասին մեք ևս զզջացած եմք, վասն զի աւելի օրինաւոր պիտի ըլլար՝ եթէ կանխապէս Ազգային Վարչութեան ծանուցուէր՝ բայց մեք նախնեաց սովորութեանը հետեւեցանք :

Իսկ եթէ կ'ամբաստանեն զմեզ որ մենք մեր օժումը ընդունած եմք նախորդ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ, այս մասին ալ կը յայտնեմք որ նա ինքն արդէն հրաժարական տուած էր, և թեմականք բռնի կոչեցին զմեզ ՚ի կաթողիկոսութիւն :

Թէ այսպէս և թէ այնպէս մենք կը ճանաչեմք և հրապարակաւ կը խոստովանիմք մեր արարմանց ապօրինաւորութիւնը, յուսալով աներկմիտ՝ որ Ազգային Երեսփոխանութիւնը իբրև քաւութիւն կը համարի սոյն ապօրինաւորութեան՝ մեր եօթնամեայ անտանելի վիշտ և տառապանքը. եօթն տարին Հին օրինաց մէջ ազատական ու քաւչական թիւ մի էր, մի թէ շնորհական օրէնքը պիտի զլանայ այն շնորհը որ ստուերականը կը շնորհէր ըստ պատողաց . . . » :

Իսկ այսուհետեւ ինչ հրահանգ, ինչ կանոնագրութիւն որ կը յանձնէ մեզ՝ Ազգային Երեսփոխանական Ժողովը Աղթամարայ Ս. Աթոռոյ կաթողիկոսական թեմին նկատմամբ՝ կը խոստանամք Ստուծոյ և Ազգի Հանրութեան առջև ՚ի շինութիւն լքեալ Աթոռոյն Աղթամարայ և ՚ի յառաջադիմութիւն բազմակարօտ Ժողովրդեանն :

Մնամ աղօթարար
(Ստորագրութիւն)

ԽԱԶԱՏՈՒՐ ՎՇՏԱԼԻ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ
ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ

1870 Սեպտեմբեր 11

Ի Կ. Պօլիս Պատրիարքարանի Հայոց :

Գ . ԲՈՂՈՒՅ

1870 ամի Հոկտեմբեր 27 . մատուցեալ
առ Ազգային Կեդրոնական Վարչութիւնն ,

«Մեծապատիւ Ատենակալք Ազգային
Կեդրոնական Վարչութեան .

Սեպտեմբեր 11 թիւ նամակաւս
առ Երեսփոխանական Ընդհանուր Ժողով
Ազգիս բողոքեցի միանգամայն և աղաչեցի
իմ վշտալի վիճակիս նկատմամբ՝ որ բա-
ւական համարուի իմ եօթնամեայ անտա-
նելի համբերութիւն և իմ դատ տեսնե-
լով թող տրուի ինձ երթալ 'ի Սուրբ Ա-
թոռս :

Կը լսեմ որ տակաւին իմ բողոք Ընդ-
հանուր Ժողովի մէջ չէ կարգացուեր և
կամ թէ՛ պատուական Ժողովոյդ պէտք
է յանձնուի . ուստի կը դիմեմ Ազգային
Վարչութեանդ որ նոյն նամակս կարդա-
լով դուք ինքնին պատասխանէք :

Ապա թէ ոչ՝ որ յառաջ Ընդհանուր Ժո-
ղովին ներկայացնէք , և այն կամ ոչ ինձ
պատասխան տայք . քանզի այս վիճակս
մահուանէ վատթար ու տաղտկալի ե-
ղաւ , բաւ է :

Մնամ աղօթարար
(Ստորագրութիւն)

ԽԱԶԱՏՈՒՐ ՎՇՏԱԼԻ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ
ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ

1870 Հոկտեմբեր 27

'ի 4 . Պօլիս Պատրիարքարանի Հայոց .

ԺԳ

Աղթամարայ Կաթուղիկոսական խնդրոյն
նկատմամբ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ
1870 Յունվար 23ի նիստին մէջ ըրած մի վեր-
ջին որոշումը :

Ժ . հատուածին մէջ արդէն նշանա-
կած էինք թէ՛ այս խնդիրն Երեսփոխա-
նական Ժողովոյ Ատենին նիւթ եղաւ
1867 փետրվար 24 էն սկսեալ՝ ուրկէ
ետքը վրայ կուգայ Պօղոս Սրբազան Պատ-

րիարքի հրաժարականը , Տեղապահի օ-
րերն , և ետքը Խրիմեան Ամեն . Սրբա-
զան Հօր ընտրութիւնը :

1870 Յունվար 23 ին Սրբազան Պատ-
րիարք հայրը յատենի ընդհանուր Ժողո-
վոյ հետեւեալ խօսքերը կ'ընէ Աղթամարայ
խնդրոյն նկատմամբ .

« Այս օրերս ստիպողական գրեր եկած
են վիճակայնոց կողմէն Խաչատուր Եպիս-
կոպոսին համար , և տնհամբեր պատաս-
խանի կ'սպասեն , թէ այս խնդիրը կնճուա-
լից կերպարանք մը ստացած է , մէկ կողմէն
եկեղեցական Համագումար Ժողովին վը-
ճիւրը կայ , զոր Երեսփոխանական Ընդ-
հանուր Ժողովն ալ հաստատեր և վաւե-
րացուցեր է , միւս կողմէն Խաչատուր
Եպիսկոպոսն որ նոյն վճուոյն ենթակայ կը
գտնուի , և որ երկար ատենէ 'ի վեր Պօ-
լիս եկած է , կը գանգատի թէ՛ Տիեզե-
րական երից Ս . Ժողովոց հակառակ ա-
ռանց իր ներկայութեան տրուած է այն
վճիւրը . և որովհետեւ ինք ներկայ է այժմ ,
կը խնդրէ որ նորէն դատուի Մասնաժո-
ղովոյ մը առջև և իր փաստերն ալ քըն-
նուին » :

Այս խօսքերէն ետքը կ'առաջարկէ Սրբ-
բազան Հայրն որ՝ այս խնդիրը նկատողու-
թեան առնելով խոհական և միջին ճամ-
բով տնօրէնութիւն մը ըլլայ անմիջապէս .

Սոյն խնդրոյն վրայ բաւականին վիճա-
բանութիւն ըլլալէ ետքը կ'որոշէ Ընդհա-
նուր Ժողովն .

« Այս առաջարկութեանց վրայ , յիշ-
եալ Կաթուղիկոսական խնդիրը Սրբազան
Պատրիարքին և Եկեղեցական Համագու-
մար Ժողովին տնօրէնութեանը յանձնել
որոշեց » : (տես Բ . տումար Ազգ . Ընդհ .
Ժողովոյ Ատենագրութեան երես 45-1870
Յունվար 23) :

Ազգային Երեսփոխանական Ժողովոյ ո-
րոշումը անգործադրելի կը մնայ՝ և 1870
Մայիս 5 , Քաղաքական Ժողովոյ ԺԵ . նիս-
տի մէջ կը յիշատակուի այսպէս .

« Աղթամարցիք բազմութեամբ ներ-
կայանալով Խաչատուր Եպիսկոպոսի Կա-

Թուղիկոսութեան խնդրոյն վախճան տալու համար Թախանձանօք խնդիր մատուցին :

Ժողովն առանձին Սրբազան Պատրիարքին և Սիմէօն Սրբազանին հետ խորհրդակցելով տեղեկութիւն առաւ որ Աղթամարայ խնդրոյն վերաքննութիւնը՝ որ ընդհանուր ժողովը Սրբազան Պատրիարքին յանձնած էր, դեռ Համագումար ժողովին ներկայացուցած չէ :

Սրբազան Պատրիարքը յայտնեց թէ՛ Խաչատուր Եպիսկոպոս առ այժմ վանք մը երթալ սպասել կ'ուզէ, մինչև իր խնդրոյն վերջաւորութեանը. և հարցուց թէ կրնամք արդեօք այս մասին տնօրէնութիւն մ'ընել :

Ժողովը յայտնելով որ իրեն չը վերաբերիր այս խնդրոյն միջամտութիւն ընել, յանձնեց Սրբազան Պատրիարքի և Սիմէօն Սրբազանի տնօրէնութեանը :

Ազգային Երեսփոխանական ժողովոյ կազմութենէն ետքն ալ նախորդ Ազգային Վարչութիւնը յԱտենի Երեսփոխանական ընդհանուր ժողովոյ կը խոստանայ՝ Աղթամարայ կաթուղիկոսական խնդրոյ տեղեկագիրը պատրաստել և ներկայացնել ժողովոյն, և այս ևս անգործսուրբելի կը մնայ մինչև նախորդ Վարչութեան հրաժարիլը վրայ կը հասնի. այս օրինակ կախ կրմնայ Աղթամարայ կաթուղիկոսական խընդիրը՝ մինչ ց'տնօրէնութիւն Պատկառելի Խառն ժողովոյդ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պետրոս կաթուղիկոս Աղթամարայ Աթոռոյն կաթուղիկոս ընտրուիլ ու օծուելէքանի՛մը տարի ետքը կ'սկսին Թեմական ժողովրդեան, Միաբանից և մասնաւորապէս Վանայ Առաջնորդ Գեր. Տ. Իգնատիոս Արքեպիսկոպոսի, կողմանէ նորա՝ Պետրոս կաթուղիկոսի, իւր կոչման և պարտաւորութեանց տնվայել ընթացից և արարմանց մէջ գտնուելուն նկատմամբ բողոքագրեր և դանգաւաներ գալ յատեան Ազգային Վեդրոնական Վարչութեան. հուսկ ուրեմն Ազգային Վարչութեան խառն ժողովը նկատողութեան առնելով Պետրոս կաթուղիկոսի արարքն ու ընթացք Վանայ Առաջնորդ Գեր. Տ. Իգնատիոս Արքեպիսկոպոսն Աղթամարայ Աթոռոյն կաթուղիկոսական Փոխանորդ կը կարգէ ընդ որ միանգամայն կ'որոշէ որ Պետրոս կաթուղիկոսն Աղթամարայ վանքէն բնադուրս չելլէ. և իւր այս որոշումն ու տնօրէնութիւնը պաշտօնապէս կը ծանուցանէ Վանայ Առաջնորդին :

Սակայն Պետրոս կաթուղիկոս Ազգային Վարչութեան այս տնօրէնութենէն վերջնիսկ, իւր անվայել ընթացքն ու արարքը չթողլով դարձեալ կը շարունակէ, որուն վրայ Միաբանութիւնն ու Թեմականք Պետրոս կաթուղիկոսի գրաւոր հրաժարականը տալէն և վանքէն ելլելով Փշավանց Գիւղն իւր եղբօր տունն երթալէ ետքը, առանց Ազգային Վարչութեան ծանուցանելու և անոր հաճութիւնն առնելու 1864 Սեպտեմբեր 10, Նարեկայ վանուց մէջ կը գումարին, ուր Պետրոս կաթուղիկոսի կեանքն ու արարք 'ի քննին առնելէ վերջ՝ միաձայն հաւանութեամբ ըզ Խաչատուր Սրբազան Աղթամարայ Աթոռոյն կաթուղիկոս կ'ընտրեն և հանրագրութեամբ մը որ միանգամայն պայմանագիր մ'է, կը հրաւիրեն զԽաչատուր Սրբազան որ Միաբանից ու Թեմականաց հաճութեամբ եղած սոյն ընտրութիւնն ընդունի :

Խաչատուր Սրբազան հանրագիրն առ.

հերով և Միաբանից ու թեմականաց թա-
խանձանաց զիջանելով կ'ընդունի իւր 'ի-
կաթուղիկոսութիւն Տանն Աղթամարայ
եղած այս ընտրութիւնը : Ասկից տասն և
հինգ օր վերջ Սեպտեմբեր 25 ուրբաթ
օր Միաբանից և այլ թեմական իշխանաց
հետ վանքը կ'երթան , որպէս զի կաթու-
ղիկոսական օժման արարողութիւնը կա-
տարեն , կը լսէ Պետրոս կաթուղիկոս այս
անցքերը և կը փութայ ինքն ևս վանքն
երթալ , սակայն միաբանութիւնը կար-
գելու զանի և չթողուր , նա ալ 'ի Փշա-
վանց Գիւղն կը քաշուի , վանայ Առաջ-
նորդ Գեր . Տ . Իգնատիոս Արքեպիսկոպոսն
ալ կ'իմանայ Միաբանից ու թեմականաց
այն ձեռնարկութիւնն և անմիջապէս իր-
բեւ կաթուղիկոսական Փոխանորդ Տանն
Աղթամարայ , կը փութայ Տեղական կա-
ռավարութեան հրամանաւ , մէկ Հա-
րիւրապետ եւ մէկ քանի Զարկիչ զրկել
'ի վանս Աղթամարայ , որպէս զի նոր կա-
թուղիկոսի օժումն արգելուն , բայց
նորա դեռ վանք չժամանած արդէն խա-
չատուր Սրբազան կաթուղիկոս կ'օժուի ,
յորմէ երկու օր ետքը՝ մինչդեռ Միաբանք
և թեմականք վանայ կառավարչէն զըր-
կուած Հարիւրապետն և նորա քով գըտ-
նուած Զարկիչներն վանայ ծովուն ալե-
կոծեալ վիճակի մէջ գտնուելուն համար
'ի կղզին կը գտնուին , Սեպտեմբեր 28
երկու շաբթի գիշեր Պետրոս կաթուղի-
կոսը Փշավանց Գիւղը Մանուկ անուն ազ-
գայնոյն տան մէջ քնացած միջոցին տանը
երգիքէն գնտակի հարուածով կը զար-
նուի և կը վախճանի :

Պետրոս կաթուղիկոսի սպանման գոյժը
թէ առ Բ . Դուռն և առ Ազգային կեդ-
րոնական վարչութիւնն կը հասնի , ընդ-
որ և խաչատուր սրբազանի կաթուղիկո-
սանալու լուրը :

Բ . Դուռը սոյն ոճրագործութեան հե-
զինակը գտնելու համար անմիջապէս կը
հրամայէ վանայ կառավարչին որ քննու-
թիւն ըլլայ և ըստ խնդրոյ Ազգային կեդրո-
նական վարչութեան վանայ տեղական կա-

ռավարութեան դատական ատենին ան-
դամ կը նշանակուին վանայ առաջնորդ
Գեր . Տ . Իգնատիոս Արքեպիսկոպոս և
կարնոյ առաջնորդ Գեր . Տ . Յարութիւն
Արքեպիսկոպոս , որպէս զի նոյն ոճրագոր-
ծութեան համար կատարուելիք քննու-
թեանց ներկայ գտնուին , ուր քննու-
թիւնն 1864 սեպտեմբեր 28 էն մինչև
1865 ապրիլ 16 կատարուելով թէպէտ
Աղթամարայ միաբան մի քանի Եպիսկո-
պոսներ , ընդ որ և խաչատուր սրբազան
իւր կասկածելի քննութեան կ'ենթարկ-
ւին , բայց քննութեանց արդիւնքն եր-
կու քրթերու կուտայ Պետրոս կաթու-
ղիկոսի սպանման ոճրագործութիւնը , և
ոճրագործ քրթերը փախած ըլլալուն
համար թէ՛ յիշեալ մի քանի Եպիսկո-
պոսունք և թէ՛ խաչատուր Սրբազան
նչ անսարտ) և նչ յանցապարտ կը հա-
մարուին , ինչպէս որ Բ . Դուռն ևս
'ի սկզբան ըստ այնմ կը ծանուցանէ Ազ-
գային Պատրիարքարանին : Իսկ վերջին ան-
գամ առ Ազգային Պատրիարքարան ուղ-
ղած երկու ծանուցագրերովն ալ՝ առանց
երբէք միջամտելու , Աղթամարայ կաթու-
ղիկոսական խնդրոյն կարգադրութիւնը
Ազգային Պատրիարքարանի անօրէնու-
թեան կը յանձնէ :

1866 Յուլիս 12 ի կազմուած Եկեղեցա-
կան Համագումար ժողովը խաչատուր Սրբ-
բազանի կաթուղիկոսութիւնը անվաւեր
կը վճռէ , զոր Ազգային Ընդհանուր ժողո-
վըն իր 1866 Յուլիս 22 ի նիստին մէջ թէ-
պէտ և կ'ընդունի , սակայն վերջէն խնդ-
րոյ նիւթ ըլլալով բաւական վիճաբանու-
թիւն կ'ըլլայ սոյն վճռոյն վրայ և վերջ-
նական որոշում մը չընդունելով կախ կը-
մնայ մինչև 1870 Յունվար 23 ի Ընդհա-
նուր ժողովոյ նիստին :

1868 Հոկտեմբեր 12 ին Մայրաքաղաքս
կը հասնի խաչատուր Սրբազան ըստ ո-
րոշման խառն ժողովոյ :

Խաչատուր Սրբազան Մայրաքաղաքս
հասնելէն վերջը երկու անգամ առ Ազգա-
յին Ընդհանուր ժողովն և մէկ անգամ

ալ առ Ազգային կեդրոնական վարչու-
թիւնն կը բողոքէ Եկեղեցական Համագու-
մար ժողովոյ իր բացակայութեանը ա-
ռանց իրմէ բացատրութիւն պահանջելով
տուած վճռոյն դէմ և կը խնդրէ որ իւր
դատը տեսնուի :

Ազգային Ընդհանուր Ժողովն իր 1870
Յունվար 23 ի նիստին մէջ Սրբազան Պատ-
րիարք Հօր առաջարկութեան համեմատ
վերստին նկատողութեան առնելով սոյն
խնդիրը , կ'որոշէ որ վերջնական տնօրէ-
նութիւն ընելու համար Սրբազան Պատ-
րիարք Հօր և Եկեղեցական Համագումար
ժողովոյ յանձնուի , ընդհանուր ժողովոյ
սոյն որոշումը կախ կը մնայ մինչ ցվերա-
քննութիւն Ազգային Երեսփոխանական
Ընդհանուր Ժողովոյ :

Ազգային Երեսփոխանական Ընդհանուր
ժողովոյ վերակազմութենէն վերջը Ազ-
գային վարչութեան նախորդ Քաղաքա-
կան ժողովը յԱտենի Ազգային Ընդհա-
նուր ժողովոյ կը խոստանայ ԱզԹամարայ
կաթուղիկոսական խնդիրը Տեղեկագրով
մը բերել յատեան Ընդհանուր ժողովոյ ,
զոր և կ'ընդունի Ազգային Ընդհանուր
ժողովն :

Ինչպէս բովանդակ տեղեկագրէս կ'ե-

րեայ թէ՛ ԱզԹամարայ կաթուղիկոսական
խնդիրը մինչև ցարդ երկարելուն պատ-
ճառը մէկ կողմանէ Եկեղեցական Համա-
գումար ժողովոյ վճիռն և միւս կողմանէ
ալ Խաչատուր Սրբազանի քանիցս այն
վճռոյն դէմ բողոքելն ու դատ պահանջե-
լը եղած է , բայց որովհետև Եկեղեցա-
կան Համագումար ժողովոյն արձանագը-
րութիւնը չգտանք , որպէսզի գիտնայինք
թէ՛ Եկեղեցական Համագումար ժողովը՝
Խաչատուր Սրբազանի նկատմամբ տուած
վճիռը , ի՞նչ հիման վրայ հաստատած
է , և որովհետև Ազգային Ընդհանուր ժո-
ղովոյ 1870 Յունվար 23 ի նիստին տուած
որոշումն ալ՝ որ այս խնդիրը Եկեղեցական
Համագումար ժողովոյ տնօրէնութեան կը-
յանձնէր , դեռ ևս չէ գործադրուած ,
հետեաբար մինչև ցարդ առ կախ մնացած
է ԱզԹամարայ կաթուղիկոսական խն-
դիրը :

Այս է ահա , ԱզԹամարայ կաթուղիկո-
սական խնդրոյն մինչ ցարդ եղած անցից և
պատմութեան բովանդակութիւնը , զոր
Ազգային վարչութեանդ խառն Յանձնա-
ժողովը ՚ի գիր առնելով կը ներկայացնէ
պատկառելի Ատենիդ :

Մնամք անձնուէր

Սիրելի Ազգիս

ԱզԹամարայ կաթուղիկոսական
խնդրոյ քննիչ խառն Յանձնաժողովոյ

15 Նոյեմբեր 1872 ,

Ի Ղալաթիա

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ՀՄԱՅՆԱԿ Վ. ԱՅԱԶՄԱԼԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ

ԲԱԴԻՅՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

ԲԱՐԹՈՂ Մ. ՔԻԻՐՔՃԻՊԱՇԼԵԱՆ

Յ. Ք. ՍԵՐՈՎԲԵՆԱՆ

ԲԱՐՍԵՂ ՀԱԼԱՃԵԱՆ



